ՀԱՎԵԼՎԱԾ 4

010-2015 թվականների ընթացքում /17.03.2015թ. դրությամբ/ ՀՀ ոստիկանության կողմից գրանցված “Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին” միջազգային կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներին առնչվող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների հատկանիշներով կատարված հանցագործության դեպքերը

	Կատարում, Հարուցում	Հոդված	Նկարագրությունը	Ընդունված որոշումը
1.	07.12.14 22.12.14	160	Կոտայքի մարզի Սարալանջ թաղամասի խաչմերուկում անվճար հոգևոր գրականություն բաժանելու ժամանակ “Եհովայի վկաներ” կրոնական կազմակերպության անդամ Գևորգ Վարդանյանին է մոտեցել տաքսի մեքենա, որի միջից դուրս են եկել 2 կին, վիճաբանել Գ. Վարդանյանի հետ և խոչնդոտել նրա գործունեությունը: Տաքսու վարորդ Նորիկ Ժորայի Բաղդասարյանը մեկ անգամ բռունցքով հարվածել է Վարդանյանին:	Գտնվում է նախաքննության փուլում
2.	03.03.10 12.09.13	226մ2կ2	Հրապարակայնորեն, բռնություն գործադրելու սպառնալիքով ազգային թշնամանք հարուցելու և ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ իրականացնելու նպատակով, ինտերնետային տարբեր կայքերի էջերում տեղադրվել են նյութեր, որոնցում առկա են բացասական գնահատականներ ֆրանսիահայերի, Ռուսաստանի վերաբերյալ, ինչպես նաև առկա են բռնության կոչեր, սպառնալիքներ:	Կասեցվել է Քր. Դատ. Օր-ի 31h մ1,կ1 14.10.13թ
3.	27.02.11 12.04.11	226մ2կ1	Անհայտ անձանց կողմից, ֆեյսբուք սոց. կայքում տեղադրվել է ,«մահ ջհուդներին» արտահայտությունը:	Կասեցվել է Քր. Դատ. Օր-ի 31h մ1,կ1 27.12.11թ
4.	23.04.11 24.04.11	226մ2կ1	Վրաստանի քաղաքացի Սպարտակ Հայկազի Ակոջյանը Թբիլիսիի Ադրբեջանի դեսպանատան հարակից տարածքից ձեռք բերելով հակահայկական քարոզչական	Դատարան 08.12.11թ.: Կենտրոն-Նորք Մարաշ Ը/Ի դատարանը

			գրքեր՝ հայ ժողովրդի վերաբերյալ զրպարտիչ տեղեկատվությամբ, տեղափոխել է Հայաստան և փորձել իրացնել «Վերնիսաժ» տոնավաճառում՝ հայտարարություններ անելով տոնավաճառի վաճառողների և այցելուների ներկայությամբ:	25.04.12թ դատապարտել է ա/զ-4 տարի ժամ-ով, 20.07.12թ. վերաքննիչ դատարանը ճանաչել է անմեղսունակ և ազատել: